ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE2B-DA6F-4DC2-B079 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/11435/02/25

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03.11.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Տրանսֆորմատորների Գործարան Ամպեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ խնդրելով «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ և «Տրանսֆորմատորների գործարան Ամպեր» ՓԲԸ միջև 27.03.2024 թվականին

կնքված Ուժային տրանսֆորմատորների մատակարարման թիվ A-98/24 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ 02.10.2025թ.-ի թիվ 08-ՌՊ-08/1144 ծանուցումը ճանաչել անվավեր:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 27.10.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/11435/02/25 քաղաքացիական գործը, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **27.10.2025 թվականին,** իսկ հասանելի է դարձել **28.10.2025 թվականին**:

Դատարանի 30.10.2025 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 30.10.2025 թվականին, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **30.10.2025 թվականին,** իսկ հասանելի է դարձել **31.10.2025 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով

կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվի առնմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ից պետք է պահանջել «A-98/24» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Տրանսֆորմատորների Գործարան Ամպեր» ՓԲԸ-ի ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել «A-98/24» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072